Արձանագրություն N 2

ՀԾԿՀ-25/8-ԳՀԾՁԲ ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման միջոցով աուդիտորական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

26 մայիսի 2025թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մեսրոպ Ղարիբյանը, անդամներ՝ Գայանե Ավետիսյանը, Լուսինե Մկրտչյանը, Աննա Հարությունյանը և քարտուղար՝ Էդգար Շադյանը, բացակայում է Աստղիկ Հակոբջանյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

ՀԾԿՀ-25/8-ԳՀԾՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Ղարիբյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումները և գտնվելու վայրը		
	«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն	«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 2. Կամար ԲԿ,7-րդ հարկ	Նախահաշվային գին
	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	
	Գնային առաջարկը /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/		
1	40000000	68000000	48000000

Հանձնաժողովը 29.05.2025թ.-ին ուսումնասիրեց հայտերը և արձանագրեց որ, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին՝ և որոշեց «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից և ընկերության հետ հրավերով սահմանված ժամկետում կնքել պայմանագիր:

Հանձնաժողովը արձանագրեց նաև, որ «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին՝ մասնավորապես

- Ներկայացված գնային առաջարկը գերազանցում է գնման գինը, իսկ փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հաշվի առնելով, որ եթե ընտրված մասնակիցը հրաժարվի պայմանագիր կնքելուց հանձնաժողովը «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ին առաջարկած գինը գնման նախահաշվային արժեքի գերազանցելու հիմքով մերժելու է և հայտարարելու է չկայացած, հետևաբար հանձնաժողովը որոշեց հայտը մերժել նախահաշվային գինը գերազանցելու հիմքով պայմանավորված:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0, բացակա 1:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Մեսրոպ Ղարիբյան

անդամներ _____ Գայանե Ավետիսյան

Լուսինե Մկրտչյան

Աննա Հարությունյան

քարտուղար Էդգար Շադյան